

ԼԵԶԱԿԱՆ ՆՈՐ ՏՎՅԱԼՆԵՐ ՀԱՅՈՑ ԴԱԽԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ
ԿՐՈՆԻ ԵՎ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԳԱ ակադեմիկոս Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ

1

Օտարագրի և հայ գիտնականների մեջ երկար ժամանակ տարածված է եղել այն կարծիքը, թե հայ հեթանոսական կրոնը ձևավորվել է իրանականի հիման վրա, ներկայացրել վերջինիս մի ածանցյալը: Այս կարծիքը կորցրեց իր հիմքերը լեզվաբանության, պատմագիտության, ազգագրության, կրոնագիտության նոր նվաճումների լույսի տակ:

Այն բանից հետո, երբ Հ. Հյուբշմանը ցույց տվեց, որ հայերենը ոչ թե իրանական լեզու է, այլ հնդեվրոպական լեզվաընտանիքի անկախ խումբ (ճյուղ), գիտնականները բնականաբար սկսեցին հայոց բուն կրոնի որոնումները, իրանական հեթանոսական աստվածների մեջ սկսեցին տեսնել հայերի պաշտած ավելի հին աստվածների ձևափոխություններ, նրանց անունների տակ փորձեցին գտնել բուն հայկական աստվածների: Դեռևս XIX դարի վերջերին Հ. Գիլցերը ձայն բարձրացրեց այն հետադոտողների դեմ, որոնք հայկական ողջ դիցաբանությունը դիտում էին որպես իրանական¹: Ավելի ուշ Հ. Տաշյանը հայանում է այն կարծիքը, որ հայոց կրոնի մեջ Արամազդի միայն անունն է իրանական, իսկ կերպարանքը բուն հայկական է²: Առաջ տանելով այս տեսակետները՝ Ա. Մատիկյանը երեք հիմնական տարբերություն է տեսնում իրանական և հայկական կրոնների միջև. «նախ և առաջ հայ դիցաբանությունը երկարմատյան նկարագիր չունի. գեթ այս մասին բացահայտ վկայություն ամենևին չունինք: Երկրորդ՝ հայոց Արամազդը նախ կըսվի Անահտա, նանեի, Միհրի և առհասարակ բոլոր աստվածներու, մինչդեռ պարսիկներու քով չկա այսպիսի կապակցություն մը Ահուրա-Մազդայի և մյուս աստվածներու միջև: Երրորդ՝ հայկական մեհյաններն աճածան էին սպասարկուներու բազմություն մը, որոնց թիվը երբեմն հարյուրն ալ կանցներ: Արդ այսպիսի հաստատության մը հետքն անգամ չկա պարսիկներու քով»³:

Հայ հեթանոսական կրոնի պատմության համար էական նշանակություն ունեցավ ուրարտական, ապա նաև խեթական սեպագիր արձանագրու թղթաների վերծանումը: Բացահայտվեցին հայ կրոնի պատմության նոր աղբյուրներ: Գիտությունը ծանոթացավ ուրարտական դիցանուններին, որոնց մեջ վերջերս ցույց տրվեց հայկական մի ամբողջ շերտ⁴: Խեթական արձանագրությունների վերծանումը հնարավորություն տվեց ոչ միայն ծանոթանալու խեթա-լուվական ժողովուրդների կրոնին և հայերի հետ նրանց կրո-

¹ H. Gelzer. Zur armenischen Götterlehre. Leipzig, 1896.

² Հ. Տաշյան. Ուսումն դասական հայերեն լեզվի. Վիեննա, 1920:

³ Ա. Մատիկյան. Կրոնի ծագումը և դիցաբանությունը ըստ համեմատական կրոնագիտության. Վիեննա, 1920, էջ 161—162:

⁴ Գ. Զահուկյան. Հայկական շերտը ուրարտական դիցարանում.—«Պատմա-բանասիրական հանդես», 1936, № 1: Հմմտ. նաև Ս. Հմայակյան. Վանի թագավորության պեռական կրոնը. Երևան, 1930:

նական փոխադրեցությունը, այլև գաղափար կազմելու հայերի նախնիների՝ հայասցիների, դիցարանի մասին:

XIX—XX դդ. հայ ազգագրագետ բանասերների հավաքած նոր նյութը բացահայտեց հայ հավատալիքների նոր աղբյուրներ, ընդարձակեց դրանց վերաբերյալ մեր պատկերացումները: Այդ նյութի մշակումը Խ. Սամվելյանի և ուրիշների կողմից էական նշանակություն ունեցավ հայերի հնագույն պատկերացումների ակունքների որոշման համար:

Վերջապես, համեմատական լեզվաբանության նորագույն նվաճումները, դրանց մեկնաբանությունը լեզվաբանական հնէաբանության մասնագետների կողմից, համեմատական կրոնագիտության և համեմատական լեզվաբանության տվյալների ավելի զգուշ և հմուտ զուգորդումը⁵, այս բոլորը հիմք տվեցին նոր եզրակացությունների համար: Ժիշտ է, համեմատական լեզվաբանության նվաճումները հայագիտության մեջ դեռ քիչ են օգտագործվում կրոնի բնագավառի պատմության համար, երբեմն էլ անհմուտ ձեռքերում ծառայում անհավաստի և մակերեսային եզրակացությունների, բայց ընդհանուր առմամբ հայագիտությունը կարողանում է աստիճանաբար գտնել ինքն իրեն նաև կրոնի պատմության ուսումնասիրության բնագավառում:

2

Ներկա հոդվածը նպատակ ունի ի մի բերել և որոշ առումով արժեքավորել այն տվյալները, որ տալիս է լեզվաբանությունը նախապատմական շրջանի հայերի կրոնական պատկերացումների մասին: Ամենից առաջ կանգ առնենք հայերենի բնիկ հնդեվրոպական բառապաշարի այն շերտի վրա, որ կապված է հայերի կրոնական պատկերացումների հետ: Այդ շերտը երկար ժեռ է. կան բառեր, որոնց նախաձևերը հենց հնդեվրոպական շրջանում կրոնապաշտամունքային արժեք են ունեցել, և կան բառեր, որ այդպիսի արժեք են ստացել հայերի՝ հնդեվրոպական միասնությունից անջատվելուց հետո: Առանձին դեպքերում դրանց տարբերակումը հեշտ չէ: Հնարավոր է, որ կրոնապաշտամունքային որոշ բառեր, որոնք համաբնույթ զուգահեռներ չունեն հնդեվրոպական ուրիշ լեզուներում, հենց հնդեվրոպական շրջանում կազմավորվող հայկական ցեղերի մեջ այդ բնույթն ունեցել են:

Հնդեվրոպացիները մեկ միասնական կրոն չեն ունեցել, և բոլոր հնդեվրոպացիների համար միասնական դիցանուններ չկան. կարելի է խոսել միայն մասնակի զուգահեռների մասին: Համեմատական տվյալները կարծես թե հիմք են տալիս խոսելու լուսավոր աստվածային երկնքի պաշտամունքի մասին: Հնդեվրոպական *dei-«փայլել, շողալ» արմատից *-վ-աճականով կազմված են այնպիսի ձևեր, որոնք նշանակում են մի կողմից՝ «աստված» (հմտ. հուն. Ζεύς—Չևս աստված, լատ. Iū-(piter), (Iuppiter), այլև հ. հնդկ deva- «աստված»), մյուս կողմից՝ «երկինք», «օր» (հմտ. հ. հնդկ. dyau-«երկինք», լատ. dies, հայ. տիւ օրս): Աստեղից երկար ժամանակ արվել է այն եզրակացությունը, որ հնդեվրոպացիների մոտ եղել է լուսավոր, աստվածային երկնքի պաշտամունքը, և հնդեվրոպացիներին վերագրվել է մեհաստվածային (մոնոթեիստական) կրոն: Այս հանգամանքը բնական տարակուսանքներ է հարուցել: Մեր կարծիքով՝ հնդեվրոպական սկզբնական կրոնը բնապաշտական է եղել, որի վրա մակաշերտվել է մարդակերպային (անթրոպոմորֆային) և բազմաստվածային բնույթի պաշտամունքը. անձնավորված աստվածային երկնքի գաղափարից ծագել է հայր-աստծու գաղա-

⁵ հմտ. օրինակ, E. Benveniste. Vocabulaire des institutions indo-européennes. 2. Paris, 1969.

փարը. հմմտ. լատ. lū-plter, որի Լրկլորդ Բաղարիչը (-piter) կապված է pater «հայր» բառի հետ, և որին համապատասխանում են հ. հնդ. dyáuṣ pitā-ն և հուն. Ζεύς πατήρ-ը:

Հնդեվրոպական այս արմատահիմքի մի ժառանգորդն է տիւ-ը («օր»): Առանձնակի գործածությամբ «աստված» իմաստով որևէ բառ հայերենում չի պահպանվել՝ կորչելով հավանաբար *տիւ «աստված» և տիւ «օր» համանունության պայմաններում, այնպես ինչպես հայ «պապ» բառը՝ հայ թրուշուն. հավթուլուն համանունի առկայությամբ:

Սակայն իտալացի լեզվաբան Վ. Պիզանին⁶ հայերենի հնչաբանությանը նվիրած իր աշխատության մեջ փորձել է աստուած բառի համար վերականգնել *agl-diy-ag'- նախնաձևը (սրպես ասուրբ աստված), որտեղ *diu-ը հենց նշված հիմքն է: Ճիշտ է, այս վերականգնման մեջ խիստ կասկածելի է *agl-> աւ- անցումը, և Պիզանին հնտագույնում անցել է նոր ստուգաբանություն՝ աւ-ը հանդեցնելով հ.-հ. *ank'-o- «մաս, բաժին» ձևին և -տուած-ը մեկնելով որպես հայերեն տուած «տուփ», բայց աստուած բառի մեջ *diu-> տիւ բաղադրիչի վերաբերյալ ենթադրությունը մնում է հավանական. միայն թի, մեր կարծիքով, աւ-ի մեջ պետք է տեղադրվի հ.-հ. *ansu-/ṇsu- հիմքը որից ծագում են հ. հնդկ. asu- «շունչ, կենսաշունչ, կյանք» ասու-ṛa «կենդանի, աստվածային, հզոր, ոգի, աստվածություն. Երկրային դե», ավ. ahura- «աստված» (որից Ahura-mazda՝ հայերեն Արամազդ անվան աղբյուրը, հ. իսլ. ass, հ. անգլ. os «հեթանոսական» աստված» բառերը, Հ.-հ. *ansu-ն կապված են համարում *an- «շնչել» (ալիւ «շնչում, քամի») արմատի հետ: Այսպիսով, աստուած բառի մեջ մենք կունենանք ansu-diy-aṣ'-o- հին կապակցության ածանցյալը (*ag'-o- «տանող, առաջնորդ»): Մեր ստուգաբանությունը *ansu- հիմքի *ansu- ածանցյալից է բխում հույ. այս «շունչ, ոգի, շար ոգի, դե» բառը, և, այսպիսով, այս-ն ու աստուած բառի աւ-ը միևնույն աղբյուրից են:

Որ հայերն ունեցել են առանձին տիւ «աստված» բառ, երևում է, մեր կարծիքով, ուրարտական barzudibiduni կապակցության գոյությունից, որը պետք է լինի պաշտամունքային ինչ-որ շինության անվանում, և որը ուրարտերենով չի բացատրվում. հայերենի բարբառային ձայնեղությամբ (ավելի քիչ հավանական է ենթադրել հնդեվրոպական ձայնեղի պահպանում) այս-տեղ առկա է հայերեն *բաբաու դիւ դուն (*բաբաու տիւ տուն) բարբառ աստ-ծու տուն» կապակցությունը:

Հնդեվրոպական *dei- «փայլել, շողալ» արմատի ածանցյալներն ավելի էլ են տիւ «օր» բառը և տիւ-այր>տեյր (խառնված *Ciu-paiér-ի հնարավոր ածանցյալի հետ), տիւ-եգեբ, տիւ-կիւ բառերի տիւ- բաղադրիչը (վերջինս մեկնում են «մեծ»):

Մենք անհավանական ենք համարում աստուած բառի ինչպես Յ. Հիլ-մարսոնի ստուգաբանությունը (*stn-stHu-aṣ'-os> աստուած՝ հ.-հ. *s'(!)-u- «բարձրացնել, կանգնեցնել» արմատից), այնպես էլ Ն. Յա. Մառի՝ փոյու-

⁶ V. Pisani. Studi sulla fonetica dell'armeno.— „Ricerche linguistiche“, 1959. Նոր հրատարակություն՝ „Mantissa“, Brescia, 1978, p. 178 (թան. 21):

⁷ Գ. Բ. Զահուկյան. Ստուգաբանություններ.— «Բանբեր Երևանի համալսարանի», 1983, № 2, էջ 87—88:

⁸ Մանրամասները տե՛ս Գ. Զահուկյան. Հայկական շերտը ուրարտական դիցարանում, էջ 51—52:

գլխավորը Արշակունի աստծու անվան հետ կապելու փորձը, որ ընդունում է Շ. Աճառյանը:

Որ աստուած անունը իրոք գոյություն է ունեցել հայերի մոտ հին ժամանակներից սկսած, երևում է Գ. Ա. Մելիքիշվիլու՝ ուրարտական արձանագրություններից մեկի նոր ընթերցումից, ըստ որի այստեղ առկա է *asliuzi* «աստված» կամ «կուռք» բառը⁹: Մակայն հակառակ Մելիքիշվիլու կարծիքի՝ պետք է ենթադրել ուրարտական փոխառություն հայերենից:

Հայերենի մեջ աստվածության գաղափարի երկրորդ կարևոր նշանակումը անհղական ղիֆ «աստված, հեթանոսական աստված» բառն է: Թեք հոլովաձևերում ղից և ղից զուգահեռ ձևերի առկայությունը Շ. Հյուբշմանը բացատրում է նրանով, որ ղից ձևը բաղարկվել է իրանական փոխառության հետ¹⁰. սակայն մեզ թվում է, թե այստեղ դեր է խաղացել նաև հնում առանձնակի գոյություն ունեցած *աի «աստված» բառը, որ, թերևս, ազդել է նաև դե (հզն. սեռ. ղիաց) բառի ձևավորման վրա. վերջինս նախ ունեցել է աղի, բարի ոգի, ապա, հավանաբար քրիստոնեության մուտքից հետո, «շառ ողի» իմաստով: Դիֆ բառը բնիկ հնդեվրոպական ծագում ունի և գալիս է հոգնակի **dnēs-es* ձևից. հայա-նա-բա-հնում *դնէսթլտն* է ունեցել նաև նղակի ձևը. ինչպես երևում է արտաբանական տեքստերում հանդիպող *Aršbedl-nl* դիցանունից, որ արտասույն է հըն. *Aršwə-dl*՝ ձևը (Արծառ-դի-ջր. Հայկրեն բառը դուգահեռն էր ունի լատ. *feriae* (հին *iesiae*) «տոնական օր», *fanum* (*fesum*) «սրբատեղի, աստվածների նվիրված տեղ» պաշտամունքային բառերի մեջ. հուն. *θεός* «աստված» և հ. հնդկ. *dhisana* (մի աստվածահու անուն) բառերի հատկացումը այս խմբին այժմ կասկածելի է համարվում, բայց հայերեն բառի բնիկ հնդեվրոպական բնույթն անկասկած է:

Հայ հին մատենադրության մեջ աստուած բառը գործածում են որպես քրիստոնեական, իսկ ղի-ֆ-ը՝ որպես հեթանոսական աստծու նշանակում: Բայց ո՞րն է եղել դրանց տարբերակման հիմքը նախքան քրիստոնեության մուտքը: Առաջին բառի մեջ պահպանված աի «աստված» բառի հնդեվրոպական ձևը, ըստ է. Բենվենիստի, որպես երկնայինի նշանակում հակադրվել է երկրայինին. ղի-ֆ բառի մեջ այդպիսի հակադրություն չկա: Թերևս այս է եղել պատճառը, որ աստուած բառը դարձել է քրիստոնեական աստծու նշանակում, իսկ ղի բառը, որ հեթանոսական շրջանում կարող էր գործածվել ամեն մի աստծու անվան հետ, հոգնակի ղիֆ ձևով մնացել է որպես հեթանոսական աստվածների հավաքական անվանում և որպես հեթանոսական դիցաբանի յուրաքանչյուր անդամի նշանակում: Հայ հեղինակները հունական երկրորդական աստվածությունների և ոգիների հավաքական անվանումները նույնպես նշանակել են ղիֆ բառով:

Առանձին աստվածությունների անուններից ակնհայտորեն բնիկ հնդեվրոպական ծագում ունեն Աստղիկ, Հայկ և հավանաբար Արա անունների հիմքերը: Այս աստվածությունները, բնականաբար, ընդհանուր հնդեվրոպական շեն, այլ պաշտել է են հայկական ցեղերի մեջ. ընդ որում նրանց կերպարները զուգակցվել են առաջավորասիական և փոքրասիական համապատասխան աստվածությունների կերպարների հետ, և նրանց պաշտամունքը ձեռք է բերել համապատասխան զուգահեռ գծեր: Մյուսներից Աստղիկ-ի Աստղ հիմքը գալիս է հայ. աստղ-ից, որ ունի այնպիսի զուգահեռներ, ինչպիսիք են հուն. *ἀστὴρ*, լատ. *stella* և այլն: Աստվածուհիներ են նշանակում նաև «աստղ» նշանակող հ.-հ. բառերի սեմական զուգահեռները՝ ակկադ. *Istar*, փյուն-

⁹ Г. А. Меликишвили. К чтению одного места в летописи урартского царя Аргишти I.—Переднеазиатский сборник, М., 1979, с. 174.

¹⁰ H. H. Schmann. Armenische Grammatik. 1, Leipzig, 1895, S. 439.

2 «Հանդես», № 1

նիկ. 'strel «Աստարտա» և ալլն: Հայկ անունը որպիս հայ ժողովրդի էպոնիմ. անշուշտ կապված է հայերի հայ ինքնանվանման հետ, որ գուցե է հ.-հ. *potl- «տեր» հիմքից. հմմտ. հ. հնդկ. pati-, ավեստ. paiti- (իրանական աղբյուրից է հալ. պետ-ը). լատ. palls «հզոր, կորոզ» և ալլն: Եթե նկատի առնենք, որ Արա Գեղեցիկի մեջ առկա է մեծնող և հարուստն առնող աստ-ծու պաշտամունքը՝ կապված բուսականության և սկզբնավորվող հողագործության հետ, ապա անհավանական չի լինի կարծել, որ Արա անունը կապված է յ-առ-ն-ել, յ-առ-ութիւն բառերի առ- արմատի հետ. վերջինս գալիս է հ.-հ. *eg- «շարժել, բարձրացնել» արմատի ձայնդարձային *լթ- ձևից կազմված դերբայական *լթ-լո- հիմքից՝ ուղղակիանում հատուկ անունների յ-ի սովորական կորուստով և թեք հալոյների համարանական ի-ով հիմքով՝ Արա, Արայի. այսպիսով Արա սկզբնալին իմաստով պիտի նշանակի «հարուստ, վեր կացած, հարստություն առած» Այս նույն արմատից *mo- *men- ածանցներով կազմված են արմ(ն) «արմատ», արմատ և թերևս հայերի արմն(ն) անվանումը (որպես ընծիուղ, ճլուղ): Ցիզակից բառերից հմմտ. հուն. ὄρνυμι «շարժել, բարձրացնել, վեր կացնել», լատ. orior «վեր կենալ, բարձրանալ. ծագել», խեթ. ar- «վեր կենալ, կանգնել» և ալլն:

Արա անվան՝ վերևում տրված ստուգաբանությունը հիմք է տալիս (յ)ա-րալէզ «մեծնելին լիզելով կենդանացնող առասպելական էակ» բառի ստուգաբանության համար: Այս դեպքում հին պետք է համարել յառալէզ, երկրորդական՝ առալէզ ձևը: Արայի անվան հետ կապվելով՝ յառալէզ-ը ստացել է առալէզ ձևը, ապա բարբառային փոփոխությամբ (միջին ա-ի կորստով և լ-ի մոտ $r > n$ անցմամբ) դարձել առլէզ:

Հոգու և մարմնից դուրս գտնվող ոգիների ու առասպելական էակների պաշտամունքը արտահայտություն է գտել, բացի վերևում հիշված (յ)առալէզ բառից, այնպիսի բառերի մեջ, ինչպիսիք են հոգի, ոգի, այս, ալլև, որոշ վերապահությամբ, երեւոյթ, տեսիլ բառերի մեջ:

Սրանցից հոգի և ոգի բառերը ծագում են հ.-հ. *peu- «փշել, շնչել» բնա-ձայնական արմատի միևնույն *poullio- ածանցյալից, ընդ որում հ-ով և առանց հ-ի ձևերի տարբերակումը տեղի է ունեցել սկզբնապես առանց իմաստային հատուկ տարբերակման. երկուսն էլ ունեն «շունչ» և «հոգի, ոգի» իմաստները. վերջին երկու իմաստները զարգացել են հայերենում: Նույն արմատից ծագում են հետևյալ և *p(h)u- տարբերակից *k-աճականով փշել բա-յերը: Հայերեն հոգի և ոգի ձևերի իմաստային զարգացումը զուգահեռ ունի հ.-հ. *an- «ջնչել, փշել» արմատից լատ. animus «հոգի, ոգի» բառի զարգացման մեջ: Այս արմատից է բխեցվում հ.-հ. *ansu- հիմքը, որից ինչպես տեսանք, ծագում են anslo- > այս «շունչ, շնչուն, ոգի. չար ոգի» բառը և թերևս աստուած բառի աս- բաղադրիչը:

Երեւոյթ և տեսիլ բառերը դեռևս կրոնական հատուկ արժեք չէին ստացել:

Երեւոյթ և տեսիլ բառերը դեռևս կրոնական հատուկ արժեք չէին ստա- «աստված»-տիւ «օր, ցերեկ» զուգահեռը և Աստղիկ դիցունհու պաշտամունքը, այլև ունիկ հնդեվրոպական ծագում ունեցող արեւ ու արեգ բառերի հետ կապված որոշ հանգամանքներ: Այս բառերը զուգահեռ ունեն հ. հնդկ. ravl- «արև» բառի մեջ (բացառյալ՝ միայն երկու լեզու ընդգրկող, զուգաբանություն): Արևը դիտվում էր որպես կյանքի աղբյուր, և արև բառը նշանակում էր նաև «կյանք». յառեւէ արկալեւ, զառեւ հասանել դարձվածքները նշանակում էին «կյանքից զրկել», յառեւէ անկալեւ-ը՝ «կյանքից զրկվել»: Արեգ և արեւ բառերից կազմված արեգակն և արևակն բառերը, այլև ակն արեւու կապակցությունը չկայում են երկնքի անձնավորման և արևի՝ որպես աչք բնութագրի մասին. այսպիսի դուգորդումը տարածված է նաև այլ ժո-

դոկտրինների մոտ և կապված է ժողովրդական հավատալիքների հետ¹¹։ Այս առնչությամբ նշենք, որ արևը ծառայում էր նախահայերի տարածական կողմնորոշմանը։ Հայերը արևի կեսօրվա դիրքը ընկալում էին որպես հա-
րաւ, որ նշանակում էր «առաջ» (հմմտ. ավեստ. pourva- «առաջ. հարավ»), հյուսիսը՝ որպես «ետևում ընկած» (հ.-հ. *seukel k'ijij-)¹²։

Նախնական կախարդության և հմայության տարածվածության մասին են խոսում բնիկ հնդեվրոպական ծագում ունեցող և կրոնի բնագավառում մասնագիտացած այնպիսի հոմանիշներ, ինչպիսիք են գէտ, գիտուն, թովիչ, հարցունկ «կախարդ, հմայող» բառերը։ Հ.-հ. *uei- «տեսնել. գիտենալ» ար-
մատից (հմմտ. հայ. գիտեմ, այլև գիտ) կազմված գէտ և գիտուն բառերի իմաստային զարգացման մասին գաղափար են տալիս նույն արմատից ածանցված այնպիսի բառեր, ինչպիսիք են հ. անգլ. wita «իմաստուն մարդ, խորհրդատու», հ. վ. գերմ. wizzo «իմաստուն մարդ», պրուս. waidlotojis «քուրմ», waidleimaši (ստորադ. եղ. հզն. 1-ին դեմք) «կախարդենք», ռուս. ведун «կախարդ», հ. հնդ. vidyā «կախարդություն», vidatham «իմացու-
թյուն». քրմական իմաստութուն, կախարդիմացություն» և ալիւ իմաստային զարգացումը նույն է, ինչ որու. знать «իմանալ» բայից կազմված знахарь «բժիշկ-կախարդ» և որու. քա. рѣк. знахаръ «կախարդ» բառերի զարգացումը

Թովիչ բառի և թովիչ գոյականի թով- արմատը Հ. Աճառյանը և, նրա հետևողությամբ, Գ. Զուլտան¹³ կապում են հ.-հ. *steu- «բարձրաձայն գո-
վել» արմատի հետ, որ, սակայն, լուսի առանց *s-ի տարբերակ և իմաս-
տով բաժանական հեռու է կանգնած։

Մենք ազնվի հակված ենք թով-ը բխեցնելու հ.-հ. *teu- «ուշադրություն դարձնել» արմատի *iou- ձայնդարձից՝ նկատի ունենալով մասնավորապես կելտական զուգահեռները՝ մ. կիմր. tut, մ. հուլ. tuadhait «կախարդ»։ Բո-
լոր բեկբերում էլ հայ. արմատի հնդեվրոպական ծագումը կասկած չի հա-
րուցում։

Հարցանել բայի և հարցունկ «կախարդ, գուշակ» գոյականի հարց- ար-
մատը գալիս է հնդեվրոպական լեզուների լայն տարածված *perk- «հարց-
նել» արմատի *pŕk'-sk- ածանցյալից։ Այս արմատից կազմված որոշ բա-
ռեր առանձին լեզուներում կրեական իմաստ են ստացել։ Հարցունկ-ի իմաս-
տին մասնավորապես մոտ է հ. անգլ. fraht «(նախա)գուշակություն» բառի
իմաստը։

Քննարկվող բառախմբին մոտ են անիծանել, անէծ-f բառերը, որոնց
դիմաց ցեղակից լեզուներն ունեն ոչ-կրոնական իմաստներ՝ Պուն.
δνειδος «հիշումբանք, պարստվանք. ամոթ, խալտառակություն», լատին.
«հայհոյել. պարսավել. կշտամբել»։ ալիւ հ. հնդկ. nīdā «արհամարհանք-
պարստվանք», լատվ. nēis «ատելություն. բռնամտություն» և այլն։

Հին հայերի մոտ տարածված ծեսերի և արարողությունների մասին գա-
ղափար են տալիս բնծայ, ձօնի «դոհ» աղօթել (?), մաղթել բառերը։

Սրանցից բնծայ բառը «նվեր» ընդհանուր իմաստի հետ միասին ունի
մասնավոր «աստվածային նվեր, դոհ» իմաստը, ձօնի-ն ունի ընդհանրա-
պես կրոնական արժեք։ Բնծայ բառը զուգահեռ ունի միայն հ. հնդկ.
eñhit- «նվեր, ընծա» բառի մեջ, և սրանց համար Հ. Հյուբշմանը վերա-

¹¹ Հմմտ. M. Abeghian. Der armenische Volksglaube. Leipzig, 1899, S. 89.

¹² G. B. Djahukian. L'étymologie des mots *haraw* „sud“ et *hiwslk(?)* „nord“ et le système d'orientation des anciens arméniens.—Revue des études arméniens, XX, 1986—1987, pp. 29—33.

¹³ Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. Բ, Երևան, 1973, էջ 199.
G. R. Solta. Die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen. V. u. u. 1869, S. 38

կանգնում է *enə'həti- նախաձևը: Սակայն ուրիշները չեն ընդունում այս ստուգաբանությունը, և հայերեն բառի հնդեվրոպական ծագման հարցը մնում է անկախ:

Ձօնի բառի և սրան հարող ձօնել բայի ձօն- արմատի համար կա երկու ստուգաբանություն. մեկը գալիս է Մ. Մյուլլերից և ընդունվում է Հ. Աճառյանի, է. Բենվենիստի ու այլոց կողմից, մյուսը՝ Հ. Օստհոֆից և ընդունվում է Յ. Պոկոռնու կողմից: Առաջին ստուգաբանությամբ ձօն-ը բխեցվում է հ.-բ. *g'heu- «թափել, լցնել» արմատից, որտեղից հայ. ձուլ, ձուլել, ձեւ, հ. հնդկ. juh- «լցնել կրակի մեջ, զոհել», հուն. γέω «լցնել» և այլն. երկրորդ ստուգաբանությամբ այն բխեցվում է *g'hau- «կանչել, կոչել» արմատից, որտեղից հ. հնդկ. hav- «կանչել, կոչել», իրան. > հայ. ն-գովել, լիտվ. zavėti «խաղաղել», ռուս. зову, звать «կանչել» և այլն: Առաջին դեպքում ձօն- (հին ձաւն) արմատն իր իմաստով մտնում է հնդեվրոպական ծիսական տերմինաբանության մեջ, բայց այս դեպքում տեղա են հնչյունական դժվարություններ (որտեղից է գալիս ձաւ-ի ա-ն). երկրորդ դեպքում իր ստացած իմաստով այն մնում է որոշ չափով առանձնակի: Ձօն- արմատից է կազմված ձօնիչ «նվիրաբերող, զոհամատույց, քուրմ» բառը, որ նախորդում է հետագա փոխառյալ բառին:

Աղօթք, աղօթել բառերի աղօթ-(հին աղաթ) արմատը ակնհայտորեն կապված է աղաչել բայի հետ և գալիս է, թերևս հ.-բ. *el- բնաձայնական արմատից՝ ւ-ի հավելումով (աղաչ-աղաթ-, ինչպես մատ-չ-(իլ)-մատ): Արոնական իմաստը արմատը ձեռք է բերել հայերենում:

Մաղթել բայի արմատը հավանաբար ծագում է հ.-բ. *mel-dh- արմատի *melth- տարբերակից (mlth- > մաղթ), եթե, իհարկե, փոխառություն չէ նույն արմատից ծագող խեթ. mall- «աղոթել» բայից: Հնդեվրոպական բառը ծիսական արժեք է ունեցել, և հայերեն բառի կրոնական իմաստը գալիս է հնդեվրոպական շրջանից, թեև այդ իմաստի հետ միասին հայերենը պահպանել է նաև սովորական «խնդրել» իմաստը:

Տօն բառը ունենալով ընդհանուր իմաստ՝ միաժամանակ նշանակել է հատկապես կրոնական տոներն ու հանդեսները: Որ այս բառի իմաստը կապված է եղել սկզբնական զոհաբերման արարողության հետ, երևում է նրա ծագումից. այն գալիս է հ.-և. *dā-jdā- «բաժանել, կտրել, կտրատել, պատռել» արմատի *p- աճականով և -dā- ածանցով ձևից, որ սկզբնապես նշանակել է «զոհախնջուր»։ հմմտ. հ. իսլ. dala («darp-ni-») «մատաղ. պահալընջ»:

Հնդեվրոպական ծագում ունի նաև մատաղ «մատղաշ, երիտասարդ. փոհ, մատաղ» բառը. բայց տարածայնություններ կան նրա բուն աղբյուրի վերաբերյալ. ոմանք, այդ թվում՝ նաև Հ. Աճառյանը, այն բխեցնում են հ.-բ. *mel- «մանրել» բայի *-dh- աճականով և ստորին ձայնդարձով *ml-d- ձևից՝ ենթադրելով մաղտ- > մատղ-աշ, մատաղ ձևափոխությունը (հմմտ. հ. սլավ. младъ «նուրբ, մատաղ», ռուս. млад-ш-нѣ «կրտսեր», молодой «մատաղ, երիտասարդ»), մյուսները, այդ թվում՝ Յ. Պոկոռնին, հանգեցնում են հ.-բ. *mad- «թաց, հյութեղ» արմատին: Մատաղ-ի «զոհ» իմաստը ուշ դարգացման արդյունք է:

Արոնական հին հավատալիքների հետ կապ ունի գերազանցապես հոգնակի ձևով գործածվող անդունդ-ը բառը, որ նշանակել է ոչ միայն սովորական անդունդը, այլև ստորերկրյա աշխարհը՝ հետագայում փոխարինվելով իրանական ծագման սանդախտ և դժոխ-ը բառերով (վերջինս նույնպես հոգնակի գործածությամբ): Հեթանոսական կրոնի մեջ այն որպես ստորին հակադրվել է վերինին՝ երկնայինին. հմմտ. Ագաթանգեղոսի մոտ՝ «վերին բարձանց և ստորին անդնդոց»: Ան- ժխտականով կազմված այս բառի դունդ-ը, «հատակ, խորք», որ առանձին չի գործածված, ծագում է հ.-բ.

*dhu(n)dho- հիմքից. ոյն, ինչպես կարծում են, կազմվել է հ.-և. *bhu(n)dli- ժհատակ և *dhub-no-, *dhumb- թխորոթյուն, խորք՝ ձևերի բաղադրկությամբ կամ, թերևս, թարուական հնչյունափոխություններ: Կազմություններ հայերենին մոտ են հ. կիմր. anwaf(y)n, հ. կիմր. anwu (*an-dub-no-) «աստվածների և մեռածների աշխարհ» բառերը: Համատիպ կազմություն է ուս. бѣз-дна «անգույն» բառը, որի ДНУ «հատակ, խորք» կազմիչը ֆալիս է հիշյալ ~dhub-no- հիմքից:

Կրոնական բնույթի բնիկ հնդեվրոպական բառերից հիշենք նաև սուրբ և կրօն բառերը: Սրանից առաջինը հայերենին հատուկ հնչյունափոխությամբ ծագում է *k'u-bh-ro- հիմքածից (*k'eu- «լուսավորել, լուսավոր» արմատից) և կուշիտյան րադարձակ դուգահեռ ունի հ. հնգկ. subhra- «գեղեցիկ, փայլուն, լուսադույն» բառի մեջ: Է. Բենվենիստը հայերեն բառի համար ենթադրում է իրանական ծագում, բայց սա անհավանական է: Սուրբ բառի սկզբնական իմաստն է «մաքուր», և «սուրբ» իմաստը կապված է բառի պաշտամունքային գործածության հետ:

Կրօն բառը կազմված է կրել բայի արմատից -ոն (հին -ալն) ածանցով (հմմտ. գեղօն, գործօն, զգօն). վերջինս, թերևս, գալիս է հ.-և. *teno- ածանցի (հ. հնգ. -tana-, լատ. -tinu-) ձայնգարձային *-ino- ձևից՝ նախորդող *a- հիմքային տարրով¹⁴: Կրել բայի հիմքը մեր ստուգաբանություններում է հ.-և. *gʷer- «ծանր» արմատից («ծանրություն» տանել, հմմտ. այս արմատից հուն. βερίω «ծանր լինել, բարձած լինել, բեռնված լինել»): Կրօն բառը ունի ընդհանուր «կարգուկանոն, վարք, օրենք, սովորություն» իմաստը, որի հիման վրա կազմվել է «հավատ, կրոն» նեղ իմաստը. իմաստային անցումը ցույց է տալիս «նոր հայկազեան բառգրքի» մեկնությունը՝ «վիճակ կրելու կամ համբերություն»¹⁵:

Մենք վերևում անդամաբաժնի բառի օրինակով տեսանք, որ հնդեվրոպացիների մոտ եղել են թաքուի լեզվական դրսևորումներ բառերի հնչյունական կերպարանքի ընդհանուր փոփոխություններ: Այդպիսին է, օրինակ, օձ (աձ), թձ և միևնույն արմատից ծագող ռզնի, մռչիւն և բարբառային մռւմռնը, գայլ և հ.-և. *ulke-o-s բառերի փոխհարաբերությունը:

3

Եթե ճիշտ է այն վարկածը, որ մ. թ. ա. XIV—XIII դդ. խեթական աղբյուրներում հիշատակված Հայասա երկրի հիմնական բնակչությունը եղել են հայերը, և որ հայասերենը ոչ այլ ինչ է, եթե ոչ հայերենի նախավիճակը, ապա հայասական կրոնի մեջ պետք է տեսնել հայերի հին կրոնը: Այդ կրոնը պետք է լինի հնդեվրոպական կրոնական պատկերացումների, սովորությունների ու ծեսերի հետագա ձևափոխությունը՝ ենթարկված նաև Առաջավոր Ասիայի, մասնավորապես խեթերի և խուրիների կրոնական ազդեցությանը:

Հայասական կրոնի վերաբերյալ մեր ուղղակի տվյալները սահմանափակվում են փաստորեն դիցանուններով: Արձանագրություններից մեկում թվարկված են այն աստվածները, որոնք պաշտվել են հայասական տարբեր քաղաքներում:

Դացի գաղափարագրորեն և նկարագրորեն տրված ԴՍ·GUR և ԴՍ tak-sanaš դիցանուններից, հիշատակվում են Baltaik, Šillili., Tarumuš, Terit-

¹⁴ Հմմտ. J. Grepin. Classical Armenian nominal suffixes. Wien, 1975, p. 61.

¹⁵ Նոր բառգրքը Հայկազեան լեզուի. 1. Վենետիկ, 1836:

tittunīš, Unagastēš, Zakk(an...), այլև սկզբից վնասված չշանակադրեր ունեցող և խեղճական տվյալների հիման վրա ենթադրաբար վերականգնվող [izzist]anuš և [Kar]buhuš գիցանունները:

Դիցանունների այս ցանկը ցույց է տալիս, որ հայաստական դիցաբանում եղել են ինչպես բնիկ, այնպես էլ փոխառյալ աստվածություններ: Բնիկ աստվածություններ են՝ Šillili..., Terittittunīš, այլև, թերևս, Baltak, Unagaštāš, Zakk(an...):

Առաջին երկուսի անունները գրեթե հավաստիորեն մեկնաբանվում են հայերենի նախաձևերով: Եթե ենթադրենք, որ հայերեն երեք (*trejes) բառի սկզբնական *t-ն հայասերենում դեռ չէր ընկել, և որ -tittunīš պետք է լինի, ինչպես կարծում է Գ. Ղափանցյանը¹⁶ հետագա հայերեն ստուգելով չափորոշյուն, պոչ՝ բառի սկզբնաձևը, ապա Terittittunīš-ի տակ թաքնված է հին *Trelltunī- ժողովրդական ձևը, որ պահպանվելու դեպքում պիտի տար *երատուն: Նշենք, որ տտուն-ի համար ընկնում են դերմանական զուգահեռներ, և հայերենի համար վերականգնվում է հ.-ի. *didun- կրկնավոր նախաձևը:

Šillili ... (վերջից վնասված) դիցանվան տակ մենք հավելած ենք տեսնելու սիդեղ «սիրեկան» (ունի և սեղեղ, սեղեխ և այլ տարբերակային ձևերը) բառի սկզբնաձևը՝ «սիրելի» իմաստով, որ ավելի ուշ ստացել է բացասական երանգ. եթե ճիշտ է սիդեղաբառ «մեղանշական» բառի դոյուլյունը, ապա այն կարող է կազմված լինել այս բառից: Սիդեղ-ը մեր ստուգաբանության համարմատ է սե, սիրել բառերի հետ և գալիս է հ.-ի. *Kēi- արմատից՝ *-l- ածանցով. հմմտ. հ. հնդկ. śila- ժողովորդյուն, բնավստություն, հ. իռլ. ce(i)le ժողովրդական, ընկեր. ամուսին, կիմր. cilyad ժողովրդական, ընկեր:

Baltak և Unagaštāš դիցանունների -ik և -astēš ածանցները ընդհանրապես են, և դրանք կարելի է մեկնել որպես հայ. -իկ (հ.-ի. *-i-kon-ից՝ *-n-ի անկումաբ, ինչպես ծաղիկ, սեռ. ծաղկան) և -աստ (հմմտ. զգաստ, իմաստ և այլն): Առաջինը ենթադրում է ինչ-որ շղահանված գոյականի փառաբանական իմաստ (քիչ հավանական է Գ. Ղափանցյանի ենթադրությունը -ik-ի խուռական ժառանգ մասին), երկրորդը՝ բայական ինչ-որ ձևի գոյականացում՝ վերացական արժեքով. այս դեպքում մենք գործ ունենք հատկության կամ երևույթի անձնավորման և աստվածացման հետ. քիչ հավանական է ենթադրել ունակ հիմք, որ պետք է լինի համեմատաբար ուշ կազմություն:

Հայաստական Zakk(an...)-ը հիշեցնում է հայ ձագ-ը, բայց այդ նմանությունը կարող է պատահական լինել:

Tarumuš-ը և, եթե ճիշտ են վերականգնումները, [izzist]anuš-ն ու [Kar]buhuš-ը փոխառյալ աստվածություններ են, այսինքն՝ հայասցիները պաշտում էին նաև փոքրասիական աստվածություններ:

Ինչպես նշված է հայասերենին նվիրված մեր վերջին ուսումնասիրության մեջ¹⁷, հնարավոր է, որ հայասերենը (այսինքն՝ հայերենի նախավիճակը) ոչ միայն աստվածություններ փոխառած լինի, այլև հենց ինքը լինի հարևան ժողովուրդների մեջ պաշտվող մի շարք աստվածությունների աղբյուրը:

Եթե շանթ/դ բառը իրոք հայերենում բնիկ հնդեվրոպական է, ապա այն կարող է լինել հարևան փոքրասիական ժողովուրդների մեջ տարածված

¹⁶ Г. А. Капанцян. Хайаса-колыбель армян. Ереван, 1947, с. 94—95.

¹⁷ Г. Б. Джаукян. О соотношении хайасского и армянского языков.—Историко-филологический журнал, 1988, №№ 1, 2.

Santa- աստծու պաշտամունքի աղբյուրը: Այս դիցանունը հանդես է դա-
լիս նաև որպես անձնանունների բաղադրիչ: Շաքթ/դ-ը որպես աստված Փոքր
Ասիայում պաշտվել է նաև խեթական պետության անկումից հետո (հմմտ.
Σανδών):

Հա կական ծագում պիտի ունենա Ne'inaša երկրում պաշտված Lušiti-
աստվածը, որի անունը կապված է հայերեն լոյս, սեռ. լուսոյ բնիկ հնչեկվոր-
պական բառի հետ. հնարավոր է, որ Հայաստանի շրջանում հայերենում եղել
է *լուսյո- լուսավոր՝ բառը՝ լատինա-օսկյան Lucetius, Leuceticus, Lou-
cetius ձևերին զուգահեռ:

Է. Լարոշի բերած խեթական դիցանունների ցանկում¹⁸ առանձնացված
են խաթական, խեթական, խուռական, սեմական լեզուներով շեղանկաբան-
վող՝ «ասիանիկ» ընդհանուր անունով հորջորջված դիցանուններ, որոնց հայ-
կական-հայաստական ծագումը չի բացառված: Հնարավոր է Andaliia (հողի
աստված) և հայ. անդ աղաշտ, արտ. (հ.-հ. *andh-), Anzallia և հայ. ան-
ծեղ (մի թռչուն), Hazzlia և խուց (հ.-հ. *khu-sko-), Kallahare հայ. քա-
ղաքար, Sulutta և հայ. շողոտ, Zukki և հայ. ձուկն բառերի կապը:

4

Հայ կրոնի մասին մեր ունեցած տեղեկությունների հաջորդ աղբյուրը
«ուրարտական» կոչված արձանագրություններն են: Ուրարտական շրջանում
հայկական ցեղերը լայնորեն տարածված պիտի լինեին Հայկական լեռնաշ-
խարհում և մեծ դեր խաղալին ուրարտական թագավորության կյանքում:
Այդ ցեղերի պաշտած աստվածությունները կարող էին մասամբ լինել միայն
տեղական բնույթի, մասամբ փոխառվել հարևան ցեղերի կողմից և նույ-
նիսկ դառնալ ընդհանուր պաշտամունքի առարկա¹⁹:

Ուրարտական արձանագրությունները, հատկապես Մհերի դռան ար-
ձանագրությունը, նշանակալից նյութ են տալիս ուրարտական դիցարանի
մասին: Մենք գաղափար ունենք այդ աստվածությունների ստորակարգու-
թյան, արական և իգական բնույթի, գլխավոր աստվածությունների գործա-
ռական արժեքի մասին²⁰:

Խնշ չափով են արտացոլված հայկական ծագում ունեցող աստվածու-
թյունները ուրարտական արձանագրություններում:

Մենք վերևում խոսեցինք աստուած բառի բնիկ հնչեկվորպական ծագ-
ման մասին և սրա հետ կապված նշեցինք, որ այն ուրարտական արձանա-
գրություններից մեկում արտացոլվել է aštiuzzi ձևով (մեկնաբանվում է «աս-
տըված» կամ «կուռք»): Միաժամանակ ուրարտական Arsibedini դիցանունը
մենք մեկնաբանեցինք որպես *արծիւի-դի. այսինքն՝ արծուադիք. որ Ar-
šibe- ձևի սուկ լժաքնված է հայ. արծիւի բառի հին ձևը, այդ երևում է
նրա մի ալլ ալանդո-ձից՝ որպես Մհնուա թագավորի ձիու անուն՝ Aršibi-
ni: Եթե մենք ունենք գրեթե անկասկած հայկական ծագման երկու դիցա-
կան անվանում, ապա կարելի է մտածել, որ կարող են լինել նաև այլ ան-
վանումներ:

Šinuwardi աստվածուհու անվան -ardi բաղադրիչը հավանաբար կապված
է ինչպես առանձին գործածված Ardi աստվածուհու անվան, այնպես էլ

¹⁸ E. Laroche. Les noms des dieux hittite. Paris, 1936.

¹⁹ Այս մասին տե՛ս Գ. Բ. Ջահուկյան. Հայկական շերտը ուրարտական դիցարա-
նում. — ԵՊՀ Գիտությունների ակադեմիայի հանդես, 1986, № 1:

²⁰ Տե՛ս մ. Գ. Շահուկյան. Վանի թագավորության պետական շրջան. Երևան, 1990:

Š(i)elardi (Melardi?) դիցանական -ardi-ի հետ, և այս դեպքում, անշուշտ, ունի կրոնական տնրմինի արժեքը: Այս ardi-ն, որ առկա է նաև Ardini քաղաքանվան մեջ, կամ պետք է ծագի իրանական (սկյութական) աղբյուրից և նշանակի «աստված» (հմմտ. սկյութ. apō «աստված»), կամ կապված լինի ուրարտ. ardiša «ուժ, իշխանություն, հրամայող քաղի հետ» (հմմտ. խեթ. mu- «ուժ» բաղադրիչը հայաստանի Tarumu- դիցանվան մեջ)²¹: Ինչ վերաբերում է Študi- բաղադրիչին, ապա այստեղ տեղի ունեցողն առկա է հալ ծին բառի հնարավոր հին *δῖ-նոյ- ձևը (հ.-հ. *gʷenos-ից): Študiarai պիտի նշանակեր «ծնի աստված»: Իհարկե, չի բացառված, որ այս անունը ամբողջովին հայկական կաղմություն լինի՝ ծինոյ-արդի՝ արդ՝ «կարգ, ձև» բաղադրիչով (սկյութ. apō «աստված» բառը ծագում է միևնույն արմատից, ինչ հայերենը):

Մենք հակված ենք հայերենով մեկնաբանելու նաև Aṭu'arasi, Turani, Zluquni, ալլե, թնդա, Alraini (ըստ Գ. Ղափանցյանի) դիցանունները: Սրանից առաջինի մեջ մենք տեսնում ենք Aṭu- բաղադրիչը, որ լեւերեւ, առկա է նաև Urarṭu անվան մեջ և հավանաբար ներկայացնում է մեծ արա բառի արտա- սկզբնաձևը՝ հ.-հ. *aṭu-ից. առաջիկա առանց մեկնությունների և նույնիսկ arasi- բաղադրիչը: Turani-ն, եթե այն կապված է մեծ աուր-ք բառի հետ, պիտի նշանակի «տրոգ, ջնորհոգ»: Zluquni-ն, որի անունը համընկնում է Zluquni երկրանվան հետ, պիտի ներկայացնի Zluquni երկրում բնակվող ցեղերի տոտեմ-աստված, եթե այն իրոք ներկայացնում է ձուկն, հղն. ձկուն-ք բառի հին *ձուկուն- ձևը:

Airaini- Գ. Ղափանցյանը մեկնաբանում է որպես հայերեն այբային այբ «քարայր» բառից: Ըստ Վ. Պիզանիի ստուգաբանության՝ այբ-ը հնդեվրոպական ծագում ունի (հմմտ. հուն. ἀντρώ «քարայր», որից լատ. antrum «քարայր»): սակայն այն, եթե նույնիսկ ենթադրենք, որ -ի-ով հիմքը համաբանական է, չէր կարող -a-ով հիմք ունենալ. դժվար է ենթադրել հ.-հ. հոգնակի ձևի արտացոլում՝ antria, և այբային սկզբնաձևի վերադարձնումը մնում է կասկածելի:

Պաշտամունքային արժեք ունի ուրարտական արձանագրություններում քանիցս վկայված ԵԱՇԱՍԻԲԻԴՈՆԻ անվանումը, որ մենք հակված ենք դիտելու որպես *բարձու տիի տուն «բարձր աստծու տուն» կապակցություն բարբառային ձայնեղացված *բարձու դիի դուն ձևի արտացոլումը:

Որոշ առումով պաշտամունքային արժեք ունի ԲԱԼԴԻՆԻ ՍԻՏՄԻՐԻ «խալ-դի սուրը (զենքը)» արտահայտությունը, որի մեջ šuri բառը փոխառվել է հալ սուր բառից. ուրարտական շրջանում այն պետք է ունենար սուր- ձևը, բայց երևի անշեշտ դիրքում ունի արտասանվում էր ք-ին մոտ և սեպագրերում արտացոլված է i-ով:

5

Հայ կրոնի, դիցաբանության և հավատալիքների ձևավորման մեջ մինչև քրիստոնեության մուտքը դեր են խաղացել նախ՝ հայ ժողովրդի հետ ձուլված ցեղերն ու ցեղախմբերը, ապա Հայաստանի հարևան ժողովուրդները: Վերջիններս, իհարկե, միայն իրանականներով չեն սահմանափակվում: Հետաքրքրական է նշել, որ նախաքրիստոնեական շրջանում փոխառված կրո-

²¹ Ժիշտ չէ Գ. Ա. Մելիքիզիլին, որ ardi-ն այս բոլորի մեջ բացատրում է որպես «աստղ, լուսատու» և Šelardi-ն մեկնում որպես «լուսին»=գիշերային լուսատու. վերջինս պիտի նշանակեր «լուսաստված»: Չի պատշաճում այս բացատրությունը նաև Ardini քաղաքանվան համադր-

նապան որոշ տերմիններ հետազայում մտել են քրիստոնեական տերմինաբանության մեջ և բնորոշել նոր հավատալիքներն ու կրոնական նոր հասկացությունները:

Հայ հեթանոսական դիցաբանության հետաքրքրական դեմքերից է Տորֆը: Հնդունված է Տորքի անունը անմիջապես կապել փոքրասիական խեթա-լուվական համապատասխան աստվածությունների հետ՝ խեթ. Tarbuna-, լուվ. Tarhund-, հիեթ. Լուվ. Tarḫu(n)t, լիկ. Trqgñt- (որոտի աստված). այս դիցաբանությունը կազմված է tarḫ- «հաղթել» ձևից, որ ծագում է հ.-ե. *ter(ə)- (*terli-) «անցնել» արմատից: Սակայն հայերեն ձևը ճշտորեն չի համապատասխանում այս ձևերից ոչ մեկին, էտրուսկ. Tarxna, Tarxu, Tərxī, փոքրասիական ուշ Tərxəvəx, Tərxəvəx ձևերը նույնպես հետո են մնում, և հարկավոր է վերադառնալ հայերեն ձևին մոտ ինչ-որ ձև: Ալդպիսի ձև է թրակյան Τορχος (նույն Τορχος) «նձնանուն»²², և, հետեաբար, հայերենի անմիջական աղբյուրը պետք է համարել հավանաբար թրակերենը: Սա մանավանդ հավանական կլինի, եթե նկատի ունենանք, որ Սկայադղի անվան մեջ պահպանվել է թրակյան սկայ- (Σκαυ-) ցեղի անունը:

Տորքի մասին տեղեկություն տվող խորհնացին նրան օժտում է Անգեղեայ մականունով և վերջինս մեկնում որպես նրա տգեղության փաստի արձանագրում. «...վասն առաւել ժահադիմութեանն ձայնէին Անգեղեայ»: Մ. Աբեղյանը, սա համարելով ժողովրդական ստուգաբանություն, Անգեղեայ ձևը մեկնում է որպես «Անգեղից սերված, Անգեղյան»։ Անգեղը հայկական աստվածներից մեկն է, և նրա անունով աստվածաշնչում թարգմանված է սեմական ներգալ աստծու անունը: Եթե այս անունը կապված է անգղ թռչունի հետ, ինչպես կարծում է Ն. Ադունցը²³, ապա կարելի է թերևս հավաստել այս բառի հնդեվրոպական ծագումը, ըստ մեր ստուգաբանության²⁴ անգղ բառը ծագում է հ.-ե. *ank- «ծոնել» ձևից (*ankə-lo- > անգղ) ըստ թռչունի կտուցի ձևի. այս նույն արմատից ծագող լատիսական Ա onkalami, Բ onkolmo «փիղ» բառերը նույնպես տրված են ըստ կենդանի ընդունած ձևի. եթե հայաս. Inq-laue քաղաքանունը կապված է Անգեղյանուհի անվան հետ, ապա առկա է ստուգաբանական ընդհանրություն:

Սեմական ազդեցությունը նկատվում է առաջին հերթին այնպիսի աստվածությունների փոխառության մեջ, ինչպիսիք են Բարշամինը և Նանեն: Բարշամին անունը ծագում է սեմական աղբյուրից. հմմտ. Բար. Ba'al samin ասոր. Ba'el samin, «հերկեքի տեր», որոնք գրեգահեռ ունեն ալկեզ Eēl šamē «հերկեքի տեր» կապակցության մեջ. վերջինիս Bēi-ը հայերեն Բելի-ի աղբյուրն է և ներկայացնում է belum) «տեր» բառի մի ձևը: Ստացվում է, որ Բելի անունը նախ փոխառվել է որպես Հայկի ասորեստանցի հակառակորդի անուն, ապա դարձել սեմական աղբյուրից փոխառված Ba'al samin կապակցության մեջ փոխարինվել բար- ձևով: Ի տարբերություն Բելի՝ Բարշամինը դիտվել է որպես տեղական աստվածություն, որի պաշտամունքը ներմուծել է Տիրան II-ը՝ բերելով նրա արձանը Միջադեպից և հաստատելով Դարանադյաց դավառի թորդան գյուղում: Նաև անունը հավանաբար գալիս է ակկադ. Nanāja անունից: Նաեայա աստվածուհու պաշ-

²² Այս առումով Տորֆ անվան Տորֆ ձևը, որ հիմք է ընդունում Մ. Աբեղյանը (Հայոց հին դասականության պատմություն, Երևան, 1944, էջ 25—28), պետք է համարել ժողովրդական ստուգաբանության արդյունք:

²³ Եւ. Revue des etudes armeniennes, 7, 1927.

²⁴ Г. Б. Джаукян. Хайасский язык и его отношение к индоевропейским языкам. Ереван, 1964, с. 74.

տամուկը տարածված է եղել ողջ Առաջավոր Ասիայում: Կ. Կոստանյանի փորձը այն բխցնելու հայ. նաճէ (նաճ, նաճի) բառից կասկածելի է, եթե շընդունենք, որ ակկադական անունը հայերի մոտ բաղտրվել է հայերեն բառի հետ: Գ. Ղափանյանի փորձը նաճէ անունը կապելու խեթ. Ninata-ի հետ անհաջող է:

Ի տարբերություն ասորական կրոնական բնույթի փոխառությունների, որոնք ակնհայտորեն կապված են քրիստոնեության հետ, հայերենի համապատասխան իրանական փոխառությունները հեթանոսական բնույթի են՝ ավելի ուշ մասամբ ներթաշվելով քրիստոնեական տերմինաբանության ոլորտը:

Իրանական փոխառությունները առաջին հերթին ընդգրկում են հայկական հեթանոսական աստվածությունների անունները: Հայ հեթանոսական դիցաբանը ձևավորվել է իրանական ղղալի ազդեցության տակ՝ ձեռք բերելով բուն հայկական դժեր:

Հայ հեթանոսական աստվածություններից իրանական բնույթի են հետևյալները.

1. Արամազդ, -այ. ծագում է A(h)ura-mazda «տեղ խմածան» ձևից՝ Արամազդը հայերի մոտ դիավել է որդես գերագույն՝ հայր աստված.

2. Անահիտ, -այ. ծագում է Anahitā «անարատ, մաքուր» (հովանաբար պարթևական) ձևից.

3. Միհր, ծագում է մ. իրան. Mihr-(<Miθra-) ձևից. Միհրը պաշտվել է որպես արևի աստված. բուն նշանակություն է «ղաշինք». սրանից է Մհեր անունը.

4. Տիր (Տիր), ծագում է Tīr (-tira-) աստծու անունից.

5. Ապանդարամիս, ծագում է spandaramat- «սրբամիտ» ձևից. ըստ Է. Բենվենիստի²⁵ հոլի աստված Aramati-ի անվան վրա ավելացել է spānta > spand- «սուրբ» բառը և տվել հիշյալ ձևը (ավիստ. spānta-armaiti). այս նույն ձևի բարբառային (առանց p-ի) տարբերակը տվել է սանդարամիտ «սուրբերկրյա աշխարհ, անդունդ, դժոխք» ձևը.

6. Վահագն, ծագում է Va(r)h(r)gna(<*vθra-gna- «հաղթանակ, հարձակման խափանում») ձևից:

Հեղինակի շրջանում այս աստվածները համադրվել են հունական համապատասխան աստվածների հետ՝ Զևս—Արամազդ, Անահիտ—Արտեմիս և այլն:

Իրանական կրոնական բնույթի մյուս փոխառություններից սանդարամիտ-ի և դժնի-ի մասին մենք առիթ ունեցանք խոսելու Այստեղ նշենք, որ այդ փոխառությունները երկու շերտի են: Փոխառությունների մի մասը մերվել է հայերենի հետ, դարձել հայերենի բառապաշարի անբաժան մասը և նույնիսկ մասամբ օգտագործվել, ինչպես նշեցինք, հետագայում քրիստոնեական համապատասխան հասկացություններ նշանակելու համար: Մյուս մասը փաստորեն կապ չունի հայկական կրոնական ըմբռնումների հետ և օգտագործվում է հատկապես պարսկական կրոնի հետ կապված հասկացություններ նշանակելու համար: Առաջին շերտի բառերից մի քանիսը կրոնական երանգ չեն ունեցել և այդպիսին ձեռք են բերել քրիստոնեական կրոնի հաստատումով:

Բնիկ հնդեվրոպական ծագման բառերի մեջ չկան պաշտամունքային շինություններ և շինությունների պատկանող մասեր ու հարմարանքներ նշանակող բառեր, մինչդեռ իրանական փոխառությունների մեջ այդպիսի բառերը մեծ թիվ են կազմում՝ առուշան, բագին զոհասեղան, մեհեան, առա-նար:

²⁵ E. Benveniste. Le vocabulaire..., p. 182.

Պաշտամունքային բառերից «զոհ» իմաստն արտահայտելու համար մենք ունենք զեն, զոն, յազ, յաշտ համանիշները: Մոգության և կախարհության համար կան զգալի թվով բառեր՝ ախտար «աստղահամա» կախարհ, հմայ, շաառիկ: Ընդհանուր պաշտամունքային բնույթի բառերից են՝ պաշտել (պաշտ, անբարիշտ), նզովել, օրհնել:

Հին հավատալիքների հետ կապված են դեռ, համբարու «պարիկ», հրադ-f, հրէշ, յուշկապարիկ, պարիկ բառերը:

НОВЫЕ ЛИНГВИСТИЧЕСКИЕ ДАННЫЕ О ДОХРИСТИАНСКОЙ РЕЛИГИИ И ВЕРОВАНИЯХ АРМЯН

Академик АНА Г. Б. ДЖАУКЯН

Резюме

Армянский язык унаследовал из индоевропейского праязыка два типа лексем, обозначающих религиозные понятия: лексемы, относящиеся к сфере религиозных понятий в период общности, и лексемы, приобретшие религиозные значения в период самостоятельного развития армянского языка. Провести четкое различие между ними не всегда возможно. Среди слов индоевропейского происхождения, обозначающих религиозные понятия, можно выделить несколько групп: 1) общие обозначения бога: *astuac* и *dike* (мн. ч.), 2) личные имена богов и мифологических существ, не имеющих параллелей у других индоевропейских народов: *Asthik* (богиня), *Hayk. Ara. Yarzlez* (*Araldz*), 3) обозначения религиозных понятий: *krawn* «религия», *surb* «спасение», *(h)ogt* «дух, душа», *ayc* «демон», «дыхание», «ветер», *gēt* (*gētun*) «злой», *harcenik* «волшебник, колдун, чародей», *ap sanel* «проклинать», *apēs-ke* «проклятие», *apcay* (?), *jawnl*, *maiaf* «жертва», (*jawnlč* «жрец»), *ařawicel* (?), *mařicel* «молиться», *tařen* «праздник» («срвоначально «телистический праздник»), *andund-ke* «бездна; престолая, подземное царство».

Гипотеза о том, что упоминаемые в хеттских источниках XIV—XIII вв. хайасцы были предками армян, дает основание для новых поисков в области истории армянской религии. Среди почитаемых хайасцами богов были как свои—местные, так и заимствованные у соседних народов, в частности, у хеттов. Из местных богов известны *Šiřiři...* (ср. арм. *siřel* «любовник», *Terřiřiunl* (ср. арм. *erl* «три» и *er* «три» и *erl* «конечность, хвост»), возможно и *Baltak* (ср. арм. «суффикс» -ik) и *Uřagařiař* (ср. арм. «суффикс» -ař). Заимствованными были *Tařimuř*, а также *Uřz ř* *řanuř* (*Kař* *řuř* *ř*). Весьма вероятно, что некоторые почитаемые у армян боги были заимствованы соседними народами и как, например *Sařia-* (ср. арм. *řanl* «молитва»).

Другим источником истории армянской религии стали урартские надписи. Недавно было показано, что урарты сохранили армянское название бога *astuac* в виде *ař* *tuřul*, и что в списке урартских богов и богинь есть боги с именами армянского происхождения: *Ař ře di-nl* (ср. арм. *arcul* «орел» и *di-ke* «бог»), *řnu-ařul* (ср. арм. *řn*, прогов. **řno*), *Ař řařař* (ср. арм. *ar* «у» и *řař* «л»), *Tuřanl* (ср. арм. *tuř-ke* «дар, подарок», **tuřan* «дарящий»), *Zluq-unl* (бог-тотем страны *Zluqunl*: ср. арм. *řukn*, мн.ч. *řukn-ke* «рыба») и др.

В формировании дохристианской армянской религии, армянской мифологии сыграли значительную роль малоазийские (ср. *Torke* при фрак. *Torxos* из хетто-лувийского источника), семитские (ср. бог *Barřamin*, богиня *Nanē*) и иранские источники (ср. *Ařanarzd*, *Anahit*, *Vahagn*, *Miřr*, *Tiř*, *Sřandaramel*). Особенно важна роль иранских заимствований в образовании армянской религиозной (в том числе христианской) терминологии.